

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ԱՍՏՎԱԾԱՅԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՇԱՐԱԿՆՈՑՈՒՄ

Արմենուհի Դրոս-Աբգարյան
Չալլե/Վիտենբերգ, Գերմանիա

Շարականագիտության ասպարեզում, մանավանդ վերջին տասնամյակներում կատարված կարևոր ձեռագրագիտական, ծիսագիտական, աստվածաբանական, երաժշտագիտական, բանասիրական, տաղաչափական և արվեստաբանական հետազոտությունների կողքին, իրենց լուսաբանման են սպասում այնպիսի հարցեր, ինչպիսիք են Շարակնոցի ծագման և վերջինիս ժամանակագրական շերտերի պարզաբանումը, Շարակնոցի տեքստի և նրա խազերի քննական բնագրերի նախապատրաստման կազմակերպումը և հրատարակությունը, «շարական» եզրի մեկնաբանումը և այլն, որոնք նախապայման են Շարակնոցի՝ որպես հայ հոգևոր մշակույթի գանձարանի, սիստեմատիկ ուսումնասիրության համար:

Շարակնոցը՝ Պատարագամատույցի և Լարեկի հետ միասին պատկանում է Աստվածաշնչից հետո ամենահաճախ ընդօրինակված ձեռագիր մատյանների շարքին: Մեզ է հասել Շարակնոցի աշխարհով մեկ տարածված շուրջ 800 ձեռագիր և, եթե հայագետների միավորյալ ջանքերով պատրաստվող Աստվածաշնչի ամբողջական քննական բնագրի հրատարակության տասնամյակներ շարունակվող աշխատանքը դեռ չի ավարտված և առնվազն նորից նույնքան ժամանակ է պահանջվում այն ավարտի հասցնելու համար, ապա դժվար է պատկերացնել, թե մոտ ապագայում ինչպես կհաջողվի իրականացնել Շարակնոցի հրատարակման ծավալուն ծրագիրը: Այն փաստն, իհարկե, որ առաջին տպագիր Շարակնոցն առաջին տպագիր Աստվածաշնչից երկու տարի առաջ է հրատարակվել Ոսկան Երևանցու ամստերդամյան տպարանում (1664/1665), չի բացառում նաև Շարակնոցի քննական բնագրի ավելի վաղ հրատարակության հնարավորությունը:

Ինչպես հայտնի է, վերջին տասնամյակներում ֆրանսիացի ծիսագետ Շարլ Աթանաս Ռընուի կողմից առաջ է քաշվել այն տեսակետը, ըստ որի Շարակնոցի ծագումը կապվում է Երուսաղեմյան կամ Եբրայապաղեստինյան ծիսական և հիմներգային ավանդույթների հետ: Համեմատելով Շարակնոցը վրացական հոգևոր երգերի նմանատիպ «Յադգարի» ժողովածուի հետ, որն, ի տարբերություն Շարակնոցի, ամենաուշը 7-րդ դարում դուրս է եկել գործածությունից, Ռընուն ենթադրում է, որ նրանք ծագում են Երուսաղեմի հույն, հայ և վրացական եկեղեցիներում գործածության մեջ գտնվող 417-ից 439 թվականներին կազմված հունարեն մի ճաշոցից, որը պահպանվել է միայն հայերեն և վրացերեն տարբերակներով, ընդ որում, հայերեն տարբերակը թարգմանվել է հինգերորդ դարի առաջին կեսին, 439 թվականից առաջ, իսկ վրացերենը՝ 450-ին: ճաշոցի վրացերեն տարբերակն՝ ի տարբերություն հայերեն տարբերակի, օրհներգեր է պարունակում, որոնք ընդգրկված են նաև «Յադգարի» հիմներգերի ժողովածուում, այսպես կոչված վրացական «Շարակնոցում»: Ելնելով այս փաստից, ինչպես նաև «Շարակնոց» և «Յադգարի» հիմ-

ներգային ժողովածուների որոշ տեքստերի ընդհանրություններից, ֆրանսիացի գիտնականը հանգում է այն մտքին, որ «Շարակնոցի» և «Յաղգարիի» միջուկը կազմող հիմներգերը սկզբնապես եղել են հունական ճաշոցի մեջ և հետագայում՝ առանձնացվելով այդ ծիսական ժողովածուից, ընդգրկվել են մի առանձին երգարանի մեջ, որը և «Շարակնոցի» և «Յաղգարիի» համար նախատիպ է ծառայել²: Վաղ քրիստոնեական օրհներգերի ժողովածուի այս նոր տիպը տարածվել է նաև այլ քրիստոնեական համայնքներում, սակայն դարերի ընթացքում թե հույների և թե այլ եկեղեցիների կողմից մոռացության է մատնվել կամ տեղի է տվել նոր հիմներգային ժողովածուների առջև, մինչդեռ Շարակնոցը՝ որպես վաղ քրիստոնեական հնագույն երգարանի միակ նմուշ, դարերի ընթացքում հարստացվելով ազգային այլ հիմներգերով, մինչև այսօր չի դադարել գործածվելուց հայ եկեղեցում:

Միևնույն ժամանակ հայտնի է, որ հայ եկեղեցական ավանդության մեջ, որին մինչ այժմ հետևում է նաև շարականագիտությունը, Շարակնոցի ամենահին ժամանակագրական շերտերը համարվող «Պահոց» և «Աստուածայայտնութեան» կամ «Ծննդեան» շարականները վերագրվում են հայ մշակույթի այնպիսի հեղինակությունների, ինչպիսիք են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և Մովսես Բերթրոզը, որը հաճախ նույնացվում է Մովսես Խորենացու հետ:

Հնարավոր է նաև, որ Շարակնոցում կենտրոնական տեղ գրավող շարականները բնավ էլ չեն պատկանում առանձին անհատ հեղինակների գրչին, այլ դարերի ընթացքում հղկված և իրենց վրա տարբեր գրավոր խմբագրությունների հետքեր կրող բանավոր ավանդության արդյունք են: Այս խնդիրները կարելի է լուծել Շարակնոցի սիստեմատիկ միջբնագավառային ուսումնասիրությունից, ինչպես նաև «Յաղգարի» ժողովածուի հետ մանրամասն համեմատությունից հետո: Սակայն, եթե «Յաղգարի» վերջին տասնամյակներում մանրամասնորեն ուսումնասիրվել և հրատարակվել է Ելենա Մետրևելու ղեկավարությամբ գործող վրացի և եվրոպացի գիտնականների մի ստվար խմբի կողմից և դրանով հիմք ստեղծել գիտական համեմատության համար³, ապա Շարակնոցը դեռ չի արժանացել նման ընդգրկուն ուշադրության հայագետների կողմից և դեռևս կարոտ է սիստեմատիկ հետազոտության ու գիտական հրատարակության: Շարլ Ռընուի և տյուբինգենյան ծիսագիտուհի Գաբրիելե Վինկլերի մասնակի դիտողությունները, որոնք հիմնված են հայ և վրացական հիմներգային ժողովածուների առանձին նմուշների համեմատության վրա, դեռևս առաջին քայլերն են այդ ուղղությամբ⁴: Իմ դոկտորական աշխատանքում՝ սիստեմատիկ կերպով հետազոտության են ենթարկվել 9 կանոններում ամփոփված Աստվածահայտնության 76 շարականներ, որոնցից յուրաքանչյուր կանոնին ուսումնասիրության մեկ գլուխ է նվիրված: Այստեղ ներկայացված են տվյալ շարականի պոետիկ կառուցվածքի վերլուծությունը և աստվածաշնչային պատկերների, եզրերի, լեզվա-ոճական բանաձևերի արտացոլումը հիմներգում: Առանձին շարականների հանգամանալի ուսումնասիրությունից հետո Աստվածահայտնության խորհրդին վերաբերող բոլոր կարևոր թեմաներն ու եզրերը ենթարկվել են մանրամասն դիտարկման՝ միայն հայ եկեղեցում պահպանված այս հին քրիստոնեական տոնի առանձնահատկությունները Շարակնոցում ավանդական համապատասխան շարականների միջոցով վեր հանելու նպատակով: Աշխատանքին կցված է Աստվածահայտնության շարականների համաբարբառը՝ հին հունարեն և գերմաներեն համարժեքներով, ինչպես նաև աստվածահայտնության թեմային նվիրված մոտիվների մի կատալոգ և բազմաթիվ հավելվածներ ու ցանկեր:

Նշված ուսումնասիրության արդյունքները հաստատում են Աստվածահայտնության շարականների վաղ ծագման հնարավորությունը: Որոշ շարականների համեմատությունը բյուզանդական ծիսական բանաստեղծության ամենանշանավոր հիմներգի՝ Hymnos Akathistos-ի հետ, որը ևս Աստվածահայտնության տոնի առիթով է

գրված, պոետիկ պատկերների և բանաձևերի առումով զգալի ընդհանրություններ է երևան բերում հայ և բյուզանդական հիմներգերի միջև: Լինա Մարի Պելտոմաա-յի՝ այդ հիմներգին նվիրված վերջին աշխատության մեջ⁵ համոզիչ կերպով ապացուցվում է, որ մինչ այժմ 6-րդ դարի բյուզանդացի հիմներգու Ռոմանոս Մելոդոսին (երգեցողին) վերագրվող այս նշանավոր, նաև Քրիստոնյա Արևելքի հեռավոր անկյուններում ծանոթ հիմներգը գրված է եփեսոսի տիեզերական ժողովի ժամանակներում, այսինքն 431 թվականի շրջանում: Նրա կարծիքով այդ հիմներգը գրվել է Կոստանդնուպոլսի պատրիարք Պրոկոսի (+ 446) պատվերով, որի գրչին են պատկանում 37 ճառ, այդ թվում անտիկ քրիստոնեական շրջանում Ս. Մարիամ Աստվածածնին նվիրված ամենահայտնի քարոզը և Tomus ad armenios (435) նամակը, որն ուղղված է Թեոդորոս Մոպսուեստացու մահվամբ (428) անհանգստացած հայ եպիսկոպոսներին՝ վերջիններիս մեղմացնելու նպատակով: Պրոկոսի երկերը տարածված էին Քրիստոնյա Արևելքով մեկ և թարգմանվել են ասորերեն, հայերեն, ղպտերեն, արաբերեն, եթովպերեն, լատիներեն, սլավոներեն և վրացերեն: Քրիստոսաբանական և մարիամաբանական մակդիրների ընդհանրությունները նաև այս հեղինակի երկերի հետ խոսում են այն մասին, որ Աստվածահայտնության շարականները պատկանում են միևնույն ստեղծագործական և ժամանակագրական ուղղության, այսինքն մեր Շարակնոցն առնվազն 1.500 տարեկան է: Գուցե հայ հոգևոր երգերի այս հնագույն մատյանը, որն աղբյուր է ծառայել Նարեկացու հազարամյա «Ողբերգության Մատյանի» համար, մի օր նույնպես իր կրտսեր գրական հուշարձանակցի նման կարժանանա մեծարժան:

Ինչպես վերը նշեցինք, շարականագիտության մուտք հարցերին է պատկանում նաև «շարական» եզրի մեկնաբանությունը: Աճառյանից հետո գիտության մեջ հերքված է համարվում այս եզրը սեմական «շիր» արմատից բխեցնելու Գաբրիել Ավետիքյանի, Մկրտիչ Էմինի և Կարապետ Կոստանեանցի առաջարկը: Ժամանակակից գիտության մեջ ընդունված է «շարական» եզրը դիտել որպես *շար* հայերեն արմատից *-ական* վերջածանցով կազմված մի բառ, որ նշանակում է կանոնի ինը երգերի շարքը և տիպաբանորեն հիշեցնում է հունարեն «հյունոս» (ὕμνος երգերի միակցություն) և «հեյրոս» (εἶρημός շարակցում) եզրերի ստուգաբանությունը (Պետերման, Աբեդյան, Ամատունի):

Շարլ Ռենուն իր «Շարականի» և «Յաղգարիի» համեմատությանը նվիրված հոդվածում ենթադրում է, որ այդ երկու հիմներգային ժողովածուների համար որպես նախատիպ ծառայած հունարեն լեզվով գրված երուսաղեմյան ճաշոցը կրել է *μνημειον* անվանումը, որը ճաշոցի հայերեն տարբերակում թարգմանվել է որպես «Յիշատակարան» (Յիշատակարան ժողովոցն, որը կատարեն յերուսաղեմ ի սուրբ տեղիս), իսկ վրացերեն տարբերակում՝ «Յաղգարի»-ում, «յիշողութեան տուրք», մի անվանում, որը փոխառված է պարսկերենից: Պարսկերենում «Յաղգար» բառի «յաղ» արմատը նշանակում է «հիշողություն, հիշատակ»: Եթե վրացերենում «Յիշատակարան» անվանումն անցել է նաև հիմներգային ժողովածուին, ապա հայերենում «Յիշատակարան» անվանումը վերածվել է «Շարականի»: Ռընուն, իհարկե, այս երկու եզրերի միջև ստուգաբանական կապ չի տեսնում, սակայն միևնույն ժամանակ անպատասխան է թողնում ընթերցողների մեջ բնականորեն ծագող այն հարցը, թե ինչ կապ կա «Յիշատակարան» և «Շարական» եզրերի միջև:⁶

Հայ հին գրականության մեջ «Յիշատակարան» են կոչվել հիշվելու և հիշատակվելու արժանի պատմական, մշակութային կամ կրոնական նշանակություն ունեցող իրադարձությունները, որոնք սերունդների հիշողության մեջ ամրապնդելու և սերնդեսերունդ ավանդելու նպատակով արձանագրվել են պատմական կամ եկեղեցական մատյաններում: Աստվածաշնչում օր. «Յիշատակարան» եզրով են անվանված բաբելոնական արքաների սխրագործություններին նվիրված արձանագ-

րությունները (Հմմտ. Գիր յիշատակարանաց, II եզր 5,17), իսկ հայրաբանական գրականության մեջ թե՛ «առաքինի նախնիների» ու «քաջ այրերի» սերունդների հիշողության մեջ տպավորելիք արարքները և թե՛ Ավետարանը, հավատացյալների հիշողության մեջ արթուն պահվելիք ուրախ լուրի, ավետիսի արձանագրությունը մի մատյանում, որը նվիրված է Աստուծո մարդկությանը փրկելու ծրագրի վերաբերյալ խանդավառ լուրին և վերջինիս քարոզմանը սերնդեսերունդ: Եղիշեի երկերում Ավետարանն անվանվում է «Ս. Յիշատակարան» (Օր. Ձայն աստուծոյ յայտ առնէ ի սուրբ յիշատակարանին, այսինքն յաւետարանի):⁷ Այս առումով «Յիշատակարան» եզրին ավելի շատ համապատասխանում է հունարեն τὸ ὑπόμνημα (լատ. commemoratio) եզրը, որը հունարեն աղբյուրներում՝ օգտագործվում է Քրիստոսի Մկրտության և Աստվածահայտնության, ինչպես նաև Ս. Ծննդյան իրադարձությունների հիշատակը եկեղեցական արարողության ժամանակ նշելու առիթով (τῶν γενηθῶν καὶ τῶν θεοφανῶν ὑπομνήματα τελοῦντες), Քրիստոսի չարչարանքներն ու վերջին դատը հիշելիս, ինչպես նաև մի պարականոն Ավետարանի կապակցությամբ, որը թվարկվում է «Յիսուսի մասին յիշատակարանների գրքերի» շարքում (τῶν περὶ Ἰησοῦ ἐν γράμμασιν ὑπομνήματων):⁸

Գործառության առումով հնարավոր է, որ Շարակնոցն ի թիվս մյուս պաշտամունքային և ծիսական գրքերի՝ Ավետարանի, Պատարագամատույցի, Ճաշոցի, կոչված է եղել սերունդների հիշողության մեջ հիմներգությանը հատուկ միջոցներով վառ պահելու՝ հիշվելու կամ հիշատակի արժանի հոգևոր ժառանգությունը (Շարակնոցի ամենահին ձեռագիրը հիշեցնում է կրճատ գրված նշումների մի գրքույկ հիմներգուների և օրհնաբանների համար, որը կոչված է եղել օգնելու, հիշողության մեջ պահպանելու համար բանավոր կերպով ավանդված շարականները): Օրհնաբանների գլխում պահեստավորված շարականները մինչև այսօր էլ հիշողությամբ են երգվում, սակայն ստուգաբանական առումով դժվար է եզրեր գտնել «Յիշատակարան» և «Շարական» տերմինների միջև: Այս կապակցությամբ հետաքրքրական է շարական եզրի մեկ այլ ստուգաբանական մեկնաբանություն (Նիկողայոս Մառի կողմից առաջարկված), ըստ որի այն ծագում է ասորերեն «շահրա» («արթնություն», «հսկում», «գիշերապահություն», Կարլ Բրոկելմանի Lexicon syriacum բառարանում բերված լատինական համարժեքն է vigiliae)⁹ արմատից կամ «շահարա» գոյականից, որը նշանակում է անքուն, արթնի հսկող, հոգևորական, որը գիշերային արարողության ժամանակ երգելով արթուն է մնում: Ասորական գրականության մեջ ևս գոյություն ունի «շահրայե» կոչվող օրհներգերի մի տեսակ, ինչպես նաև պետության գործերը հսկող քարտուղարներ, պաշտոնյաներ կամ ազնվականներ, որոնք կրում են «շահրդավեր» կամ «շահրեզան» անունները:

Հայ շարականների կանոնը, որը բյուզանդական կանոնի ինը երգերի օրհնակով ինը շարականներ է պարունակում և երգվում ութ եկեղեցական ծայներով, խորհրդանշում է Դիոնիսիոս Արիոպագացու ինը երկնային քահանայապետությունները կամ հրեշտակների ինը դասերը: Ինչպես վկայում են ձեռագիր-շարակնոցների նմանողությամբ գրված առաջին տպագիր իրատարակությունների հիշատակարանները, «երկրային օրհներգուներն» իրենց համարում են «երկնային հիմներգուների»՝ հրեշտակների արտացոլումներ երկրի վրա, որոնք «երկնային» ծեսի դպիրների, հրեշտակների նմանողությամբ մասնակցում են «երկրային» եկեղեցական ծեսին: Այսպես, Կոստանդնուպոլսում 1784 թ. լույս տեսած Շարակնոցի հիշատակարանում կարդում ենք. «Ամհատ գոհութիւն և փառք առատապարզին և ամենազօրին Աստուծոյ ... որ ... շնորհեաց մեզ նուաստիցս հասուցանել ի կատար և լոյս ածել զհոգևոր երգս երաժշտական, այսինքն, զՇարականս այս վայելուց... Ձի որպէս անկարօտն փառաց Աստուած կարգեաց ի յերկինս ի վերինս

Սիօն զիմանալի տութիւնս մշտանուագ երգով օրհնաբանս ի պաշտօն իւրոյ մեծութեանն... Այսպէս հաճեցաւ և յերկրի կարգել օրհներգուս ինքեան զբանականս զայս սեռ. զի ի ձեռն սուրբ և քաղցր երգոցն՝ զմանութիւն նոցին յինքեանս բերելով միշտ նոցա նմանեսցին...»: ¹⁰ «Երկնային օրհնաբաններին», մշտարթուն և միշտ խնդության մեջ գտնվող զվարթուներին զուգահեռ «երկրային օրհնաբաններն» իրենց անդադար փառաբանությունն արտահայտում են երեք տեսակ օրհներգություններով, որոնք պատմում են Աստուծո հարատև մարդասիրության, ողորմության և հիշարժան բարեգործությունների մասին: Շարակնոցը «երկրային օրհնաբանների» մշտա-հունչ երգարանն է:

Աստվածահայտնության շարականների վերլուծության արդյունքների հիման վրա, որոնք կիրառելի են նաև ամբողջ շարակնոցի նկատմամբ, հնարավոր եղավ պարզել, որ շարականները բովանդակության, կառուցվածքի և գործառության առումով մի կողմից հետևում են աստվածաշնչային պոեզիայի, հատկապես սաղմոսների և օրհնությունների ծրագրին և սինագոգալ ծիսակատարության սկզբունքներին, մյուս կողմից, սակայն, կրում են 8-րդ դարում հունա-հռոմեական գրականության մեջ ներմուծված կանոնի նոր ժանրի ազդեցությունը, որը պտղաբեր հող է գտնում Հայաստանում մինևույն դարում թարգմանված Դիոնիսոս Արիոպագացու ստեղծագործությունների շնորհիվ:

Այն ենթադրությունը, որ Շարակնոցը, համեմայն դեպս նրա հնագույն շերտերը, երուսաղեմում եբրայապաղեստինյան, հունաբյուզանդական և հայկական կրոնական ու մշակութային համակեցության արդյունք է և ստեղծվել է վաղ շրջանի արևելաքրիստոնեական միջավայրում, հաստատվում է ժանրային առումով բյուզանդական հիմներգությունից փոխառված կանոնի մեջ ամփոփված ինը շարականների եռանդամ կառուցվածքով, որը հիշեցնում է եբրայական սինագոգային ծեսի եռանդամ կառուցվածքային սկզբունքը՝ «բրակա» (brākā, օրհնություն, օնօլոյա), «Բաքաշա» (baqqāšā, աղերս, ձեղց) և «հողայա» (hōdāyā, օմոլոլոյա/էնչարիսիա շնորհակալություն, գոհություն, խոստովանություն) աղոթքային տարրերով:

Առավոտյան երգվող «Օրհնություն», «Հարց», «Գործատուն» և հետագայում ավելացված «Մեծացուցե՛ք» ու «Մանկունք» շարականները, որոնք նվիրված են Աստուծո փառաբանությանը, համապատասխանում են եբրայական «բրակա» սկզբունքին, «Ողորմեաց» շարականները՝ Աստուծոց աղերսվող ողորմությանը ուղղված «բաքաշա» և միջօրեին երգվող «Տէր յերկնից», «Ճաշու», ինչպես նաև երեկոյան երգվող «Համբարձի» շարականները Աստուծոյ ողորմության դիմաց օրհնաբանների երախտիքը և նրան հավատալու խոստովանությունը արտահայտող եբրայական «հողայա» սկզբունքին:

Այսպիսով, հայկական հիմներգային կանոնում հանդիպում են եբրայական-վաղքրիստոնեական և հունական-բյուզանդական ավանդույթները, որոնցից սաղմնավորվում է կանոնի մի առանձնահատուկ նոր տեսակ, որը բնութագրական է միայն հայ շարականների կանոնին:

Գրականություն

- 1 *Drost-Abgarian Armenuhi*: Die armenischen Kanones von Astowacayaytnowt'iwn (Theophanie): Philologisch-literaturwissenschaftliche Untersuchung zum ŠARAKNOC', Habilitationsschrift, Halle, 2003.
- 2 Հմմտ. *Renoux, Charles Athanas*: Le *ladgari* géorgien et le *Šarakanoc'* 'arménien, in: REArm. 24 (1993), 89-112.
- 3 Հմմտ. *Metreveli, Elena/Outtier, Bernard*: Contribution à l'histoire de l'hirmologion gǫrgien in: *Le Muséeon*, 88, 331-359; *Outtier B.*: Le *ladgari* sur Papyrus et parchemin,

- in: *Bedi Kartlisa* 37 (1979), 336-341; *Metreveli, E. Čankievi, C., Hevsuriani, L.* Ujvelesi ladgari, Tbilissi, 1980; *Metreveli, E.* Die georgischen Liturgiehandschriften des 9. und 10. Jahrhunderts und ihre Bedeutung für die Erforschung der byzantinischen Hymnographie, *Zeitschrift der Deutschen morgenländischen Gesellschaft*, Suppl. 4 (Wiesbaden, 1980), 161-169; Le plus ancien tropologion géorgien, *Bedi Kartlisa* 39 (1981), 54-62; *Outlier, B.* Un témoin partiel du lectionnaire Géorgien ancien (Sinaï Georgien 54), in: *Bedi Kartlisa* 39 (1981), 76-88; *Esbroek, van Michel.* Le manuscrit sinaïtique géorgien 34 et les publications récentes de liturgie palestinienne, in: *Orientalia Christiana Periodica* 46 (1980), 125-141; *Jeffery, Peter.* The Sunday Office of Seventh-Century Jerusalem in the Georgian Chantbook (iadgari): A Preliminary Report, *Studia Liturgica* 21 (1991), 52-75; The earliest Christian Chant Repertory Recovered: The Georgian Witness to Jerusalem Chant, *Journal of the American Musicological Society* 47/1 (1994), 1-38.
- 4 Տես ծնթ. 2, ինչպես նաև *Winkler, Gabriele:* Das theologische Formelgut über den Schöpfer, das ὁμοούσιος, die Inkarnation und Menschwerdung in den georgischen Troparien des ladgari im Spiegel der christlich-orientalischen Quellen, in: *Orient Christianus* 84 (2000), 117-177.
- 5 *Peltomaa, Leena Mari:* The language of the Virgin Mary in the Akathistos Hymn, Leiden/ Boston/Köln , 2001.
- 6 Renoux, op. cit., 109 և *Trunte, Nikolaos,* ακατε τω κγωια αιμα καιNON: Vor- und Frühgeschichte der slavischen Hymnographie, hrsgg. v. *Hans Rothe,* in: *Sakrale Grundlagen slavischer Literaturen, Vorträge und Abhandlungen zur Slavistik*, Bd. 43, München. 2002, S. 47-48, հատկապես 91-րդ ժանրությունը:
- 7 Հմմտ. I եզր 2, 22; II եզր 6,1 և Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, II հտ., Վենետիկ, 1837, 1359:
- 8 *Lampe, G. W. H.* A patristic Greek Lexicon, Oxford, 1961, 1451.
- 9 *Brockelmann, Carolo:* Lexicon Syriacum, 1928, 760.
- 10 *Ոսկանեան Նինել, Կորկոտյան Քնարիկ, Սավալյան Անթառամ,* Հայ գիրքը 1512-1800 թթ., Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 552: